

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵՆՈՒ ՀԱՍԱՐ**  
**ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՒ ԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ**  
**ՈՒՂԻԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. Հարկ վճարողի անվանումը \_\_\_\_\_
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) 

--	--	--	--	--	--	--	--	--	--
3. Գործունեության իրականացման վայրը (հասցեն) \_\_\_\_\_
4. Ավտոմեքենայի մակնիշը \_\_\_\_\_ Պետ.համարանիշը \_\_\_\_\_
5. Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների, մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի \_\_\_\_\_ ներդիրի \_\_\_\_\_  
(համարը) (համարը, գործողության ժամկետը)

6. «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածով սահմանված պատիկ թիվը	
թեթև մարդատար և բեռնատար ավտոմեքենաների համար	2000
ավտոբուսների և միկրոավտոբուսների համար	100

7. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. \_\_\_\_\_  
\_\_\_\_\_ ամիսների համար  
(տառերով նշվում է ամիս (ներք))

8. Ելակետային տվյալներ և ուղղիչ գործակիցներ	Թեթև մարդատար	Բեռնատար	17 և ավելի նստատեղ ունեցող ավտոբուս	9-16 նստատեղ ունեցող միկրոավտոբուս
<i>Ելակետային տվյալներ</i>				
8.1. Բեռնատարողություն (տ.)	X		X	X
8.2. Նստատեղերի քանակ	X	X		
<i>Ուղղիչ գործակիցներ</i>				
8.3. Գոտիականության հետ կապված		1.2	X	X
8.4. Երթուղիների հետ կապված	X	X		
<i>Լրացուցիչ ուղղիչ գործակիցներ</i>				
8.5. Ներհանրապետական երթուղիների համար	X	X	0.8	X
8.6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված երթուղիների համար	X	X	0.5	0.5
9. Հաստատագրված վճարի չափը* յուրաքանչյուր ամսվա համար, հազար դրամ			X	X

Ամիս	Ավտոբուսներով և միկրոավտոբուսներով գործունեության իրականացման օրերը																Ընդամենը		Ամսվա համար հաստատագրված վճարի չափը*, հազար դրամ
																	փաստացի	չվացուցակի օրեր	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15				
	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31			
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15				
	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31			
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15				
	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31			

10. Նվազեցման ենթակա հաստատագրված վճարի գումարը` ըստ ամիսների

Ամիսը	Գումարը (հազար դրամ)

Վճարողի  
(պաշտոնատար անձի)  
ստորագրությունը  
Կ.Տ.

գրանցված է \_\_\_\_\_ սպասարկող  
ստորաբաժանման կողմից  
թիվ \_\_\_\_\_ «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.  
Կ.Տ.

«\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

\* Հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս թեթև մարդատար և բեռնատար ավտոմեքենաներով գործունեության իրականացման համար Ստեփանակերտ քաղաքում լրացուցիչ կիրառվում է 0,5 գործակից, իսկ այլ վայրերում` ներառյալ ավտոբուսներով և միկրոավտոբուսներով գործունեության իրականացման համար` 0,3 գործակից:

**ԱԿՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ  
ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԻԶ  
ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին: Հարկային մարմնի կողմից հայտարարությունը հաշվառվելուց (գրանցվելուց) և կնքվելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

Հայտարարությունը լրացվում է յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի համար:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի փաստացի գործունեության իրականացման վայրը (հասցեն), երթուղին,

4-րդ կետում լրացվում է ավտոմեքենայի մակնիշը, պետհամարանիշը: Կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում լրացվում է դեղին հիմնագույնի համարանիշը,

5-րդ կետում լրացվում է ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների, մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար տրված լիցենզիայի համարը, ներդիրի համարն ու գործողության ժամկետը,

7-րդ կետում հաջորդականությամբ լրացվում են գործունեության իրականացման ամիսները,

8.1-րդ կետում լրացվում է բեռնատար ավտոտրանսպորտային միջոցի բեռնատարողությունը՝ տոննայով,

8.2-րդ կետի համապատասխան սյունակում ավտոբուսի կամ միկրոավտոբուսի նստատեղերի քանակը,

8.3-րդ կետի համապատասխան սյունակում լրացվում է «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված համապատասխան ուղղիչ գործակիցը,

8.4-րդ կետի համապատասխան սյունակում լրացվում է ավտոբուսով կամ միկրոավտոբուսով իրականացվող ավտոտրանսպորտային գործունեությունից հաստատագրված վճարի հաշվարկման համար «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով սահմանված՝ երթուղիների հետ կապված համապատասխան ուղղիչ գործակիցը,

9-րդ կետի համապատասխան սյունակներում լրացվում է թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների և բեռնատար ավտոմեքենայով բեռնափոխադրումների համար յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված հաստատագրված վճարի չափը՝ հազար դրամով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ, ընդ որում հաստատագրված վճարի չափը հաշվարկվում է՝

- թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների համար՝ 2000 x 1.0 x ուղղիչ գործակից,

- բեռնատար ավտոմեքենայով բեռնափոխադրումների համար՝ 2000 x բեռնատարողություն x ուղղիչ գործակից:

Ավտոբուսներով և միկրոավտոբուսներով գործունեություն իրականացնողները գործունեության իրականացման օրերին վերաբերող աղյուսակում «Ամիսը» սյունակում հաջորդականությամբ լրացնում են գործունեության իրականացման համապատասխան ամիսները՝ տառերով: Գործունեության իրականացման օրերը պարտադիր նշվում են օղակով, իսկ հանգստյան օրերը՝ անկյունագծից անկյունագիծ խաչաձև ջնջելու միջոցով: Լրիվ ամիս (բոլոր օրերը) աշխատել նախատեսելու դեպքում օղակի ձևով նշումներ չեն կատարվում: «Ընդամենը» սյունակում լրացվում է համապատասխան ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրերի քանակը՝ թվով և տառերով: «Ամսվա համար հաստատագրված վճարի չափը, հազար դրամ» սյունակում լրացվում է համապատասխան ամսվա համար ավտոբուսներով և միկրոավտոբուսներով գործունեության իրականացման համար հաստատագրված վճարի չափը՝ հազար դրամով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ (100 x նստատեղերի քանակ x ամսվա ընթացքում տրանսպորտային գործունեության իրականացման օրերի թիվ (բայց ոչ պակաս չվացուցակի օրերից) x ուղղիչ գործակից x լրացուցիչ ուղղիչ գործակիցներ:

10-րդ կետի աղյուսակի «Ամիսը» սյունակում հաջորդականությամբ լրացվում են հարկային արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող հավաստագրի գործողության ժամկետում ներառված ամիսները՝ տառերով: «Գումարը (հազ. դրամ)» սյունակում լրացվում է համապատասխան ամսվա համար նվազեցման ենթակա հաստատագրված վճարի գումարը՝ հազար դրամով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ: